

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ և ՀՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՔԱՐԹՐԻԶՆԵՐԻ
ԼԻՑԵՆԿԱՎՈՐՄԱՆ, ՔԱՐԹՐԻԶՆԵՐԻ ՊԱՀՆԵՍԱՄԱՍԵՐԻ ԹԱՐՄԱՅՄԱՆ/ՓՈՒՆԱՐԻՆՄԱՆ, ՏՊԻԶՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՌԱՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ
ՀԱՄԱՐ**

ԲԱՅ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՄՐՅՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Մասնակցի կողմից սպասարկման հիմնական պահանջներն են՝

1. ք. Երևանում Բանկի մասնաճյուղից ստացված քարթիջների լիցքավորման հայտի հիման վրա առավելագույնը 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում մասնաճյուղին տրամադրել համապատասխան լիցքավորած քարթիջներ և դատարկները վերցնել լիցքավորման համար: Մարզերում գտնվող մասնաճյուղերի համար նույն, վերոնշյալ գործողությունը իրականացնեն առավելագույնը 4 /չորս/ աշխատանքային օրվա ընթացքում:
2. Բանկը մասնակցին ապահովելու է ամսական մինչև 400 /չորս հարյուր/ քարթիջ սպասարկելու հնարավորություն, որից ամսական մինչև 150 /հարյուր հիսուն/ հատը մարզերի մասով է:
3. Լիցքավորված քարթիջները պետք է ապահովեն բարձր որակ, մաքուր տպելիություն, անադմուկ աշխատանք և քարթիջի համար Արտադրողի կողմից նախատեսված մաքսիմալ տպաքանակ: Քարթիջի լիցքավորման ընթացքում մաշված, փոխարինման ենթակա դետալները անհրաժեշտ է պարբերաբար թարմացնել մատակարարի միջոցներով, առանց հավելյալ վճարի:
4. Բանկի կողմից կատարվելու է քարթիջների տպաքանակի ստուգում:
5. Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ լիցքավորված քարթիջները չեն համապատասխանում Բանկի կողմից ներկայացված պահանջներին, ապա Բանկը կիրառում է տույժ տվյալ ամսվա մասնակցին վճարման ենթակա գումարի 10%-ի չափով առաջին խախտման համար, 50%-ի չափով՝ երկրորդ խախտման համար և պայամանագրի խզում՝ երրորդ խախտման համար:
6. Անհրաժեշտ է նաև, որ մինչև քարթիջը մի քանի անգամ լիցքավորելուց հետո մասնակիցն իր միջոցներով՝ առանց հավելյալ վճարի, իր կողմից այդ քարթիջը փոխարինի նոր քարթիջով, որպեսզի քարթիջների մաշվածության հետևանքով տպիչները չվնասվեն:
7. Տպիչների վերանորոգումն ու սպասարկումը նույնպես պետք է իրականացվի նույն մասնակցի կողմից:
8. Մասնաճյուղից տպիչի վերանորոգման համապատասխան հայտ ստանալուց անմիջապես հետո մասնակիցը պետք է մոտենա մասնաճյուղ, տվյալ տպիչը տեղում զննելուց հետո վերցնի այն, եթե դրա անհրաժեշտությունը կա, և վերանորոգած վիճակում վերադարձնի մասնաճյուղին հնարավորինս շուտ, ոչ ուշ քան 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում կամ տա համապատասխան կարծիք՝ վերանորոգման ենթակա չլինելու վերաբերյալ:
9. Անհրաժեշտ է ներկայացնել օգտագործվող տոների և պահեստամասերի որակ՝ Արտադրող ընկերություններ, հավաստագրեր, համապատասխանություն միջազգային չափանիշներին (ISO և այլն):
10. Նշել ֆինանսական մեծ կառույցների անուններ (օրինակ՝ բանկեր իրենց մասնաճյուղերով կամ նմանատիպ), որոնց հետ համագործակցում եք և ունեք իրենցից համապատասխան երաշխավորություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԲԱՆԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ և ՀՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԵՐԻ ՔԱՐԹՐԻԶՆԵՐԻ
ԼԻՑԵՆԿԱՎՈՐՄԱՆ, ՔԱՐԹՐԻԶՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ԹԱՐՄԱՑՄԱՆ/ՓՈՒՆԱՐԻՆՄԱՆ, ՏՊԻԶՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՌԱՋՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ
ՀԱՄԱՐ**

ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՄՐՅՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

№	Կազմակերպության անվանումը	Պատասխանատուի Ա.Ա.	Կոնտակտային տվյալներ
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			

11. Պայմանագրում սահմանվելու է կետ, որում ասվում է, որ մերժել Հայտերի կատարումը, եթե ամսական կտրվածքով Պայմանագրի գինը գերազանցում է 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը՝ ներառյալ հարկերը, այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:
12. Պայմանագրի լուծման դեպքում մասնակիցը պարտավոր է Բանկին վերադարձնել Բանկից վերցրած բոլոր քարթրիջները, որոնք պետք է լինեն աշխատանքային վիճակում:
13. Մրցույթով նախատեսված ծառայության մատուցումն իրականացվելու է առանց կանխավճարի, վճարումները կատարվելու են ամսական փաստացի կատարողական ակտի և դուրս գրված հարկային հաշվի հիման վրա:
14. Սույն հայտարարությամբ կազմակերպվող մրցույթի անցկացումը չի կարգավորվում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով: